

3.3. ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱԶՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Հետազոտության մեջ ընդգրկված, ընդհանուր հաշվարկով, 779 ոչ առևտրային կազմակերպությունների (առանց արհեստակցական միությունների և արհեստակցական կազմակերպությունների հաշվարկի) անդամների թվաքանակը կազմել է 516.7 հազար մարդ, որոնցից 32.8 %-ը կանայք են: Հետազոտված կազմակերպությունների տարածքային ենթակառուցվածքների քանակը կազմում է 2324, որտեղ գրանցված են կազմակերպության անդամների թվաքանակի 41.8 %-ը կամ 216.0 հազար մարդ: Ամենաշատ թվով տարածքային ստորաբաժանում ունեն կուսակցությունները, որոնցից յուրաքանչյուրը միջինում ունի 36 տարածքային միավոր:

Ըստ հետազոտությամբ առանձնացված ոչ առևտրային կազմակերպությունների խմբերի, անդամների թվաքանակը, միջինում մեկ կազմակերպության հաշվով, կազմում է կուսակցությունների համար՝ 6512, հասարակական կազմակերպությունների համար՝ 387, իրավաբանական անձանց միության համար՝ 21, իսկ հիմնադրամների համար՝ 17 անձ:

Համաձայն հետազոտության արդյունքների, հետազոտությամբ առանձնացված խմբերից հրապարակումների առկայություն ցույց են տվել հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և կուսակցությունները:

Այսպես, հետազոտված հասարակական կազմակերպություններից պաշտոնական պարբերական ունեն 11-ը: Ընդ որում, այդ 11 հրապարակումներից 7-ը լույս են տեսնում ամսական պարբերականությամբ: Հետազոտված հիմնադրամներից միայն մեկն է ցույց տվել պաշտոնական պարբերականի առկայություն, իսկ կուսակցություններից՝ 4-ը: Միևնույն ժամանակ հասարակական կազմակերպություններն ունեն նաև 74 այլ հրապարակումներ, հիմնադրամները՝ 11 և կուսակցությունները՝ 1: Հատկանշական է, որ պաշտոնական պարբերական չհանդիսացող այլ հրապարակումների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն գրքերը, գրքույկները՝ 39.1% և բրոշյուրները՝ 33,3%: